կեալներ, բացի այդ գումարեց իւրաքանչիւր գաւառից մեծ բազմութիւն, նոցա հետ միասին ուղարկեց մշակներ եւ վարպետներ եւ վերաշինել տուեց Կոմիս, Մուհամմեդիայ, Բաբ Վաք, եւ այլ քաղաքներ՝ մուսլիմների պաշտպանութեան համար, բնակեցնելով այնտեղ զինուորներ, որոնք յետ մղեցին թշնամուն եւ հալածեցին նորան։ Մուսլիմները զօրացան այս քաղաքներում, հաստատուելով երկրում։

Ապա Ծանարը արշաւեցին Հայաստան. Աբու Ջաֆար ուղարկեց Հասան ի. Քահթաբին կառավարիչ երկրի վերայ, որ պատերազմեցաւ նոցա հետ. սակայն բաւական զօրեղ չլինելով նա տեղեկացրեց ամիրապետին թշնամու բազմութեան մասին. Աբու Ջաֆար ուղարկեց նորա մօտ Ամիր ի. Իսմայէլ Հարաղիին 20.000 զօրքով, որ՝ պատահելով Ծանարներին՝ ճակատեցաւ նոցա հետ սաստկապէս. կռիւը տեւեց մի քանի օր. Աստուած պարգեւեց Ամիրին յաղթութիւն թշնամու վերայ, որ կոտորեց նորանից մի օրւայ ընթացքում 16.000 մարդ։ Դորանից յետոյ նա գնաց Ցփղիս, սպանել տուեց իւր հետ եղած գերիները եւ ուղարկեց ամեն կողմ պարելու Ծանարներին։

Աբու Ջաֆար դրեց ապա Վադիհին, իւր արձակուած ստրուկին, կառավարիչ Հայաստանի վերայ, որ մնաց այստեղ Աբու Ջաֆարի ամբողջ ամիրապետութեան ժամանակ։

Մահդիի մահից յետոյ Հայաստան անկաւ եւ մնաց այս դրութեան մէջ նաեւ Մուսայի ժամանակ։ Ռաշիդ գրեց Խուզայմայ ի. Խազիմ Ցամիին Հայաստանի վերայ, որ մնաց այստեղ մի տարի եւ երկու ամիս, կարգ եւ խաղաղութիւն հաստատելով երկրում, եւ բնակիչք հնազանդեցան նորան։ Ռաշիդ նշանակեց նորա փոխարէն Իւսուփ ի. Ռաշիդ Սուլամիին, որ գաղթեցրեց այստեղ Նազարների մի բազմութիւն. սոքա տիրեցին